

- **Դպրական շրջանը** (կամ Սքոլաստիկ, Scholastics), ուր հանրաձանսթ ու ազդեցիկ աստուածաբան փիլիսոփայ մըն Է իտալացի Դոմինիկեան միաբան **Թոմաս Աքուինացին** (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.):

Այնուհետեւ պիտի քննարկուի Միջնադարեան **Քրիստոնէական խորհրդապաշտութիւնը**^[8-25] (Christian Mysticism), որ աստուածիմաստութեան նիւթի հետ անմիջական առնչութիւն ունի: Պիտի ներկայացուի նաեւ այս ոլորտի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբանները (տե՛ս Էջ 118):

Միջնադարուն յատկացուած բաժնի վերջաւորութեան, յիշարժան կը գտնեմ **Աստուածիմաստութիւնը Հայ Միջնադարուն** առանձին Դ. Գլուխը (Էջ 131), ուր կը ներկայացուի հայաշխարհի նշանաւոր *Գլածորի* ու *Տաթեւի* համալսարանները, որոնք որպէս կրօնական հաստատութիւններ կը քաջալերէին նաեւ փիլիսոփայական ուսմունքը եւ որոշ չափով ազդուած էին եւրոպական դպրական փիլիսոփայութենէն (Scholastics): Պիտի ներկայացուի նաեւ *Տաթեւի* համալսարանի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբանները:

ԱՆՏԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Անցման Դարաշրջանը (տե՛ս **Մաս-4**, Էջ 162), կը կոչուի նաեւ *Վերածնունդի շրջան* (Renaissance), երբ Միջնադարու մշակոյթը որոշ չափով կը յաղթահարուէր, տեղի կ'ունենար հնադարեան մշակոյթի վերածնունդ մը, բայց նաեւ կը պատրաստուէր Նոր Դարաշրջանը:

Անցման Դարաշրջանին մէջ յիշատակութեան արժանի Է, փիլիսոփայական *Մարդկայնութեան* (Humanism) եւ կրօնական *Բարեկարգութեան* (Reformation) զոյգ եւ կարեւոր շարժումները:

- *Մարդկայնութիւնը*, մարդակեդրոն եւ աշխարհիկ փիլիսոփայութեան նոր ուղղութիւն մըն էր, որ կը հակադրուէր միջնադարեան դպրականութեան (Scholastics) եւ փիլիսոփայութիւնը կ'անջատուէր աստուածաբանութենէն: *Մարդկայնութիւն* շարժումը կը սկսէր Իտալիայէն, ապա կը տարածուէր ամբողջ Եւրոպայի մէջ: Մարդկայնութեան հիմնական սկզբունքը յարգանքի արտայայտութիւնն Է՝ մարդու իրաւունքներուն եւ արժանապատուութեան, ինչպէս նաեւ անհրաժեշտ կարելիութիւնը մարդու համար կենցաղային նպաստաւոր ու մարդավայել պայմաններ ստեղծելու նկատմամբ: *Մարդկայնութեան* հիմնական սկզբունքներուն մաս կը կազմեն նաեւ՝ խիղճի ազատութիւնը, հանդուրժողութիւնը եւ բռնութեան ջնջումը: Այս շրջանին, *Մարդկայնութիւն* շարժման ոլորտի մէջ, քննախօսութեան (Discourse) նիւթ դարձաւ նաեւ մարդկային կենցաղը, այլ խօսքով մարդու ամօրեայ ապրելակերպն ու վարքագիծը:
- Կրօնական *Բարեկարգութեան* շարժումը կը սկսէր Գերմանիոյ մէջ, **Մ. Լութերի** (Martin Luther, 1483 – 1546 թ.) գլխաւորութեամբ, որ պատճառ պիտի դառնար եկեղեցւոյ բաժանումի: Արդարեւ *Կաթոլիկ Եկեղեցին* կը տկարանար եւ Նոր կը կազմաւորուէր *Քողորթական Եկեղեցին*, որ պիտի ունենար իր բազմաթիւ ճիւղաւորումները: